«ԳՀԾՁԲ-2017/5-ԵՊԲՀ» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԵՎ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՀԾՁԲ-2017/5-ԵՊԲՀ-1»

ք. Երևան «27» **Դեկտեմբեր** 2017 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս **ռեկտոր Ա.Ա.Մուրադյան** -ի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Յունիսքան» ՍՊԸ-ն**, ի դեմս **տնօրեն Աշոտ Ծատուրյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **հանդերձանքի եվ անկողնային պարագաների չափագրման եվ պատրաստման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների **armeps** համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **12,030,500** (***տասներկու միլիոն երեսուն հազար հինգ հարյուր***) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	**«Յունիսքան» ՍՊԸ**
Հիմնադրամ	**Հասցե՝ ք. Երևան,Գյուրջյան 10**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,	**Խորհրդային 1**
Տերյան մ/ճ	**Հ/Հ 163338000116**
Հ/Հ 11500166513800	**ՀՎՀՀ 00855279**
ՀՎՀՀ 01503448	
	Տնօրեն՝ Աշոտ Ծատուրյան
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 1
«27» Դեկտեմբեր 2017 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ամսիմար դրդիմ?	գումն >>/Ոդվե միսդրմվնդ	միորդ միսդրմվնդ	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	98391120	Համապատասխան մահճակալի համար նախատեսված սավանի չափագրում և պատրաստում: Կտորը 100 % բամբակյա գործվածքից /սատին/, խտություն 125 գ/մ2: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 800 մահճակալի համար:	դրամ	2160000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվականի Դեկտեմբերի 31-ը:
2	98391120	Համապատասխան մահճակալի համար նախատեսված ծրարի չափագրում և պատրաստում: Վերևի հատվածը շղթայով բացվող: Կտորը 100 % բամբակյա գործվածքից /սատին/, խտություն 125 գ/մ2: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի	դրամ	4400000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվականի Դեկտեմբերի 31

		մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 800 մահճակալի համար:					
4	98391120	Համապատասխան մանկական մահճակալի համար նախատեսված սավանի չափագրում և պատրաստում: Կտոր 100 % բամբակյա գործվածքից /սատին/, խտություն 125 գ/մ2: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 180 մանկական մահճակալի համար:	դրամ	270000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվական ի Դեկտեմբերի 31
5	98391120	Համապատասխան մանկական մահճակալի համար նախատեսված ծրարի չափագրում և պատրաստում: Շղթայով բացվող: Կտոր 100 % բամբակյա գործվածքից/սատին/, խտություն 125 գ/մ2: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 180 մանկական մահճակալի համար:	դրամ	558000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվական ի Դեկտեմբերի 31
7	98391120	Չափագրում և պատրաստում ըստ պահանջի:Կտոր բամբակյա 100 % բամբակյա գործվածքից ,	դրամ	280000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան,	2017 թվական ի Դեկտեմբերի 31

		խտություն 122 գ/մ2 : Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված թվով 400 երկտակ տակաշոր ստանալու համար:				Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	
8	98391120	Չափագրում և պատրաստում ըստ պահանջի:Կտոր բամբակյա 100 % բամբակյա գործվածքից , խտություն 122 գ/մ2 : Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 900 մեկտակ տակաշոր ստանալու համար:	դրամ	450000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվական ի Դեկտեմբերի 31
9	98391120	Համապատասխան ներքնակի համար նախատեսված ներքնակի երեսի չափագրում և պատրաստում: Կտոր կիսաբամբակյա 65% բամբակ 35 % սինթետիկ մանրաթել, խտություն 90 գ/մ2, Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 10 մանկական ներքնակի համար:	դրամ	17000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվական ի Դեկտեմբերի 31
10	98391120	Ըստ բժիշկների	դրամ	2100000	1	ըստ	2017

		ինդիվիդուալ պահանջի չափագրում և պատրաստում:Կտոր կիսաբամբակյա, 65% բամբակ, 35 % սինթետիկ մանրաթել, խտություն 176 գ/մ2 կրծքավանդակի հատվածը երկտակ, թևերը մանժետներով, հետևի կապիչները 4 զույգից ոչ պակաս: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 300 բժիշկների համար:				Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	թվականի Դեկտեմբերի 31
11	98391120	Չափագրում և պատրաստում ըստ պահանջի:Կտորը 100 % բամբակյա գործվածքից , խտություն 115 գ/մ2: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 225 երկտակ վիրահատական սավան ստանալու համար:	դրամ	877500	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվականի Դեկտեմբերի 31
12	98391120	Չափագրում և պատրաստում ըստ պահանջի:Կտորը 100 % բամբակյա գործվածքից , խտություն 115 գ/մ2: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի	դրամ	702000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան	2017 թվականի Դեկտեմբերի 31

		մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 360 մեկտակ վիրահատական սավան ստանալու համար:				114 հասցեով	
16	98391120	Համապատասխան մանկական մահճակալի համար նախատեսված սինտիպոնե վերմակի չափագրում և պատրաստում: Կտորը 100 % բամբակյա գործվածքից /սատին/, խտություն 125 գ/մ2: Սինտեպոն սինթետիկ մանրաթելերից գործվածք , խտություն 300 գ/գծամետր: Գույնը՝ ըստ պատվիրատուի ցանկության, լվացման ձևի և քաշի մասին նշումների առկայությունը պարտադիր է: Նախատեսված է թվով 60 մանկական մահճակալի համար:	դրամ	216000	1	ըստ Գնորդի ներկայացված պահանջի ք. Երևան, Հերացի 58 կամ ք. Երևան Մուրացան 114 հասցեով	2017 թվական ի Դեկտեմբերի 31

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յունիսքան» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Գյուրջյան 10
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ Խորհրդային 1
Հ/Հ 163338000116
ՀՎՀՀ 00855279

Տնօրեն՝ Աշոտ Ծատուրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 27 » Դեկտեմբերի 2017 թ. *կնքված*
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	**դեկտեմբեր**	Ընդամենը
1	98391120	Սավանի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
2	98391120	Ծրարի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
4	98391120	Մանկական սավանի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%

5	98391120	Մանկական ծրարի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
7	98391120	Երկտակ տակաշորի չափման և կարման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
8	98391120	Մեկտակ տակաշորի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
9	98391120	Մանկական ներքնակի երեսի (чехол) չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
10	98391120	Վիրահատական խալաթների չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%

11	98391120	Երկտակ վիրահատական սավանի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%
12	98391120	Մեկտակ վիրահատական սավանի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%

16	98391120	Մանկական սինտիպոնե վերմակի չափագրման և պատրաստման ծառայություն	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	0 %	100 %	100%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Յունիսքան» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Գյուրջյան 10
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ Խորհրդային 1
Հ/Հ 163338000116
ՀՎՀՀ 00855279

Տնօրեն՝ Աշոտ Ծատուրյան

(ստորագրություն)
Կ.Տ.